

ՔԱՂՈՒԱԾՈՅՔ Ի ՎԵՐՋ ՏԱՐԻՈՅ

մեր աջ և ծայրագոյն ձախ թևերուն վրայ: Թուրքերը օգտուելով այս վայրկենէն, որ 12ի մօտերը կը հանդիպէր, նահանջ զարկին, և իրենց առաջին զիծերէն երկորորդին անցան: Բայց երկու ժամ վերջ մեր զունդերը թշնամիին առաջին դիրքերուն տիրելով, Պեկորիի զօրաբաժնին առաջին բունդը, քաջութեամբ յառաջելով կը յաջողէր թուրքերը խախտել իրենց պատնէշներէն և բացը թողուլ:

Երեքի միջոցները, մինչ մերիները կը տրէին Ային Զարայի վերջին ամրութիւններուն, աւելի քան ութ հազար թուրք, կանոնաւորներէ կազմուած թև մը, խառնաշփոթ կը փախէր դէպէ հարաւ արեւելք: Հինգի միջոցները, վերջին ուղտերը որ հիւանդները կը կրէին, կ'անհետանային մեր աչքերէն, ազատելով մեր թնդանօթածիգներու հարուածներէն ։

Ային Զարայի բախումներու մէջ երկու կողմին ալ ունեցած կորուստները զեռ յայտնի չեն:

Մինչ Տրիպոլիի մօտ իտալացիք այս փառաւոր յիջողութիւնները կ'ունենային, ոչ նուազ ճիգ ստիպուեցան թափել նաև Բէնկազիի բովերը, մասնաւորապէս նոյեմբեր 28ին և 29ին՝ ուր Բեզուլներու անակնկալ յարձակումները վանելու համար, կորուստ տուին՝ մեռեալ 1 սպայ և 21 հետևակ, վիրաւոր 2 սպայ և 50 հետևակ:

Սոյն օրերուն՝ նոյեմբեր 30էն դեկտեմբեր 4, իտալական զրահաւորները կարմիր ծովու ջրերուն մէջ, Մեքիայի մօտ, կ'ընկղմեն քանի մը թուրք սամբուկներ: Մինչ նաւատորմի ուրիշ բաժին մը, կը յածէր Եգեան ծովուն մէջ, սպառնալով թրքապատակ կողմներուն և նոյն իսկ Դարդանէլլի, ինչ որ ծանր մտահոգութիւն պատճառեց ոչ միայն Օսմանեան դահլիճին այլ նաև ոռս պետութեան:

Իայց զեռ հանգամանքներն այնքան ծանր չեն որ ստիպեն իտալիա այս քայլը անելու:

Հ. Ն. ԱՆԻՐԻԿԵԱՆ

1. Իշխանը առ թագաւորն. -- Իմ խիղճու վեհափառութեանդ տրամադրութեան չէ, բայց միայն իմ աստիճանս և պատուանշաններս:
2. Մախտեանկան օրէնք է արդեօք որ ամէն տիտղոսաւոր պէտք է ունենայ նաև միշտ իրաւունքը:
3. Մեծաւորաց տկարութենէն ընդունուած շնորհները՝ երախտագիտութիւն չեն պատճառեր, այլ կը քաջալերեն յանդգնութիւնը:
4. Միշտ իր իրաւունքները հարցնել մեծաւորաց և երբէք իր պարտքերը, հաւասար է անգործութեան և աշխատել չուզելու:
5. Հրաման մը որպէս զի յարգելի ըլլայ և ընդունելի, պէտք է որ ըլլայ արշար և զորձազրելի:
6. Մի խնդրեի այն հրամանը զոր ապահով չես ընդունելու, եթէ չես ուզեր մահանալ:
7. Վայ այն երկրին ուր բռնութիւնը կը յաղթէ արդարութեան:
8. Շատ անգամ չիկան օրէնք, չիկան արդար դատաւորք, այլ կան տկարներ որ կը զիջանին զօրագունին. և այս կը իոչուի արդարութիւն:
9. Օրէնքը պէտք է գործածել ամենուն, մանաւանդ տկարին արդար իրաւունքը պաշտպանելու և ոչ թէ զօրաւորին ինքնահաճոյ պահանջներուն յարմարցնելու կամ մերձեցնելու:
10. Հրամանները պէտք է որոշ տալ և զանոնք պահել: Այս յատկութիւնս վարչութեան մարդոց համար անհրաժեշտ է: Իւ հրաման մը տալէն վերջը ետ չառնելու համար, պէտք է կանխել լաւ կշռել, հանդարտութեամբ և խղճով:
11. Հրամայել և կարենալ՝ երկու զանազան բաներ են, վասն զի երբեմն հրամանը կատարելու կարևոր նիւթերը կը պակսին:

- 12. Այն հրամանը որ չես կրնար պահել տակ, մի՛ տար:
- 13. Օրինաւոր է անձին սօղաւը վնասել, բայց առանց ուրիշինը ֆնասելու:
- 14. Ոչ երբէք անձը արդարացնել, ուրիշին յանցանքը օրինակ բերելով:
- 15. Շատ անգամ փակ բերանը չիհեծեր, բայց հագուստը կը դողայ, վասն զի սիրտն է որ կը զարնէ մարմնոյն՝ իր բանտին միջէն:
- 16. Մեր զրկմանց պտուղները պէտք չէ որ քաջալերեն ուրիշներուն շտայլութիւնը:
- 17. Յաղթել սիրոյ, քանի որ յիմարական կիրք չէ դարձած:
- 18. Ամենայն արագ յաջողութիւն՝ պղտոր աղբիւր մը ունի:
- 19. Երկու դատաստան կայ՝ մէկը խիստ՝ անոր դէմ, որ չիյաջողիր, միւսը ներողամիտ՝ անոր, որ կը յաջողի:
- 20. Շատ դիւրին է անյաջող գործ մը վերջէն դատել, դժուարը՝ ժամանակին լաւ խորհուրդ տայն է:
- 21. Պատերազմէն վերջը խաղաղութիւն կու գայ, խառնակութենէն վերջը՝ կարգ:
- 22. Արժանաւորել միշտ, պահանջել երբէք:
- 23. Ատուած շատերուն տաղանդ մը տուած է յինչ ինչ, բայց ոչ ամենուն ալ դատողութիւն:
- 24. Վեհաժողովները, ինչպէս նաև յանձնաժողովները հնարուած են շատ անգամ բան մը չորոշելու և ժամ մը առաջ նիստէն ելնելու համար:
- 25. Ամէն մարդ գեղեցիկ անցեալ մը կը պատմէ երիտասարդութեան, սակայն ունի ներկայ մը ամենուն յայտնի՝ և ապագայ մը իրեն իսկ անձանօթ, բայց յոյսերով լի:
- 26. Տպականք է մասնատուի մը պատրաստուած բալասան բուրդ ձեռքէ մը իբրև օծիտ յախտենականութեան հետ պակհուղ մարդուն:
- 27. Վտանգաւոր է դեղձանիկին ազատութիւնը, վասն զի վանդակէն դուրս

- միշտ կատուին բերանը կը լննայ:
- 28. Ժամանակիս նոր յունագէտները իրենց յունարէնը զաղդիրէնէին վրայէն կը թարգմանեն:
- 29. Գաղղիացիք չափազանց ազնիւ են, նոյն իսկ կախազանին տակ դահիճը չուանը դատապարտեալին վրը անցուցած ժամանակ՝ չի մոռնար ըսելու, Pardon s' il vous plait.

3200

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	ԷԶ
ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Խաչատուր Գաւրիմեցի . . . . .	481
ՄԵԼԷՔԵԱՆ ԵՂԻԱ. — Բանաստեղծութիւններ . . . . .	489
ԱՍՏՈՒՐԵԱՆ Հ. Յ. — Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հովմայ . . . . .	494
ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Հ. Արսէն Բազրատունի . . . . .	510
ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Էլեկտրա . . . . .	530
ՄԵԼԷՔԵԱՆ ԵՂԻԱ. — Բանաստեղծութիւններ . . . . .	537
ՏԻՐՈՅԵԱՆ Հ. Ա. — Տարկուատոյ Տաստոյ . . . . .	542
ԽՄԲ. — Հանդիստ. Հ. Նիկողայոս	
Վ. Չիբիի . . . . .	558
ՕՏԱՊԱՇԵԱՆ Հ. Թ. — Օր. Պիեքլէի շուրջ . . . . .	559
ԹՈՐՈՍԵԱՆ Հ. Յ. — Այիթալաչի հուլուական կամ վարդապետական թուղթը . . . . .	559
Jeane Carlyle. — Անապատէն՝ Առ ծիծառնուկ որ իր բոյնը մեր տանեաց ներքեւ կը շինէ թրգմ. 3200 . . . . .	567
ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Տրիպոլիի Իտալ և Թուրք պատերազմը . . . . .	567
3200. — Քաղուածոյք ի վերջ տարւոյ . . . . .	575

